Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր 16/12/08

,, 08 ,, 01 ,, 2020 թ. ք. Երևան

«Երևանի կանխարգելիչ ախտահանում» ՓԲԸ / այսուհետ՝ կատարող/ ի դեմս « Կենտրոն -2 » մասնաճյուղի տնօրեն Կ Իլոյանը մի կողմից, և Հայաստանի Հանրային Հեռուստաընկերությունը ՓԲԸ-ն/ այսուհետ՝ պատվիրատու/ ի դեմս տնօրեն Մ. Գրիգորյանի ի մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին՝

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Կատարողը պարտավորվում է նշված օբյեկտներում /ընդամենը ----- օբ./ կատարել դեռատիզացիոն աշխատանքներ, ըստ կողմերի միջև պայմանավորված ժամանակացույցի, որը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը, իսկ պատվիրատուն պարտավորվում է պայմանագրով սահմանված կարգով և ժամկետում վճարել կատարված աշխատանքների համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Կատարողը պարտավորվում է՝
ա/ օբյեկտներում կատարել դեռատիզացիոն աշխատանքներ՝ իր բանվորական ուժերով, սարքավորումներով և նյութերով:
բ/ Աշխատանքները կատարել պատվիրատուի կողմից պահանջվող ժամկետներում:

2.2 Պատվիրատուն պարտավորվում է՝
ա/ Ընդունել մատուցված ծառայության վերաբերյալ կատարողական թերթիկները և հաշիվ- ապրանքագրերը, իսկ ծառայության ընթացքում թերություններ հայտնաբերելու դեպքում այդ մասին անհապաղ գրավոր հայտնել կատարողին:
բ/ Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:
գ/Օբյեկտներում տեղադրված որսի միջոցների և սարքավորումների անհետանալու դեպքում փոխհատուցել վնասը՝ դրանց արժեքի չափով:

3. ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԺԵՔԸ և ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Սույն պայմանագրով կատարողի մատուցված ծառայության գինը կազմում է 50000 (տարեկան, ամսական) հիսուն հազար ՀՀ դրամ, ԱԱՀ-ից ազատված է: Գինը ներառում է կատարողի կողմից իրականացվող (տառերով)
բոլոր ծախսերը:

3.2 Պատվիրատուն իրեն մատուցված ծառայության դիմաց վճարում է կանխիկ կամ անկանխիկ: Դրամական միջոցների վճարումը կատարվում է կատարողական թերթիկների հաշիվ- ապրանքագրերի հիման վրա, մինչև ծառայության մատուցմանը հաջորդ ամսվա 10-ը:

4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1 Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ ձևով կատարելու դեպքում կողմերը կրում են պատասխանատվություն համաձայն ՀՀ գործող օրենսդրության:

5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

5.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 31.12.2020թ:
5.2 Սույն պայմանագիրը վաղաժամկետ կարող է դադարեցվել, կողմերից մեկի նախաձեռնությամբ, եթե խախտվել են պայմանագրի պայմանները, այդ մասին ոչ ուշ քան 10 օրյա ժամկետում գրավոր տեղյակ պահելով մյուս կողմին, նշելով հրաժարման պատճառը:
5.3 Սույն պայմանագիրը կազմված է հավասար իրավաբանական ուժ ունեցող 2 օրինակից :
5.4 Սույն պայմանագիրի կնքմամբ դադարում են գործել նախկինում կնքված պայմանագրերը:

6. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵՆԵՐԸ

«Պատվիրատու»	« Կատարող»
Հայաստանի Հանրային Հեռուստաընկերություն ՓԲԸ	«Երևանի կանխարգելիչ ախտահանում» ՓԲԸ
հասցեն՝ Հովսեփյան ,26	հասցեն՝ Մ. Խորենացի,160
էլ. հասցեն՝	էլ. հասցեն՝ desinfection.c
հեռ. 65 00 15	հեռ. 57-35-90
Հ/Հ 2470102796740000	Հ/Հ 163068101555
ՀՎՀՀ 01540062	ՀՎՀՀ 00402063
բանկը Արդշինբանկ ՓԲԸ	բանկը Հայէկոնոմբանկի էրեբունու մասնաճյուղ
տնօրեն Մ. Գրիգորյան	«Կենտրոն -2 » մ/Ճ տնօրեն Կ. Իլոյան
ստորագրություն _____	ստորագրություն _____
Կ.Տ.	Կ.Տ.